ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 մարտի 2025թ. **N 12-Ն**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, 71-րդ, 74-րդ և 75-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Սահմանել.

1) ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության և ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքի ձևերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների,

2) տեղական ինքնակառավարման մարմինների (բացառությամբ՝ Երևանի ավագանու) ընտրությունների քվեարկության նախնական արդյունքների արձանագրության և համայնքում քվեարկության արդյունքների արձանագրության ձևը՝ համաձայն N 3 հավելվածի,

3) Ազգային ժողովի ընտրությունների էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների արձանագրության ձևը՝ համաձայն N 4 հավելվածի,

4) Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության նախնական արդյունքների և քվեարկության արդյունքների արձանագրության ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**